

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 33/14**

ք.Երևան

15 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 19.04.2018թ. N683/04-Ա որոշման դեմ Հարություն Թադևոսյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Հարություն Թադևոսյանը հայտնում է, որ իր կողմից ք.Երևան, Կենտրոն, Պուշկին 38/1 շենք, 59 հասցեում գրտնվող անշարժ գույքը օտարվել է 16.11.2017թ., որի նկատմամբ իրավունքները գրանցվել են Կադաստրի պետական կոմիտեի կողմից 21.11.2017թ. տրված սեփականության վկայականով:

Տվյալ գույքի օտարման կապակցությամբ առաջացող ԱԱՀ-ի գծով պարտավորությունները Հարություն Թադևոսյանի կողմից կատարվել են 18 հունվար 2018թ., ինչը հաստատվում է կից ներկայացված վճարման անդորրագրով:

Ստացվում է, որ Հարություն Թադևոսյանի կողմից համապատասխան եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկից առաջացած հարկի գումարները վճարվել են օրենքով սահմանված ժամկետում, ինչի պարագայում որոշմամբ սահմանված տույժեր հաշվարկելը և կիրառելն անթույլատրելի է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հարություն Թադևոսյանի կողմից համապատասխան եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկից առաջացած հարկի գումարները վճարվել են օրենքով սահմանված ժամկետում, ուստի Հարություն Թադևոսյանը խնդրում եմ վերացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 19.04.2018թ. N683/04-Ա որոշումը:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Հարություն Թադևոսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների 26.03.2018թ. դրությամբ Հարություն Թադևոսյանի չկատարված հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմել է 85.926 դրամ (տույժ):

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին 31.03.2018թ. Հարություն Թադևոսյանը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վարույթի նյութերին ծանոթանալու համար չի ներկայացել և որևէ բացատրություն, առարկություն չի հայտնել:

Արդյունքում, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398 հոդվածի 5-րդ կետով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 11-րդ մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 19.04.2018թ. ընդունվել է N683/04-Ա որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) Հարություն Թադևոսյանից 89.926 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

### **3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը կատարվում է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո (իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ նաև կանխավճարների տեսքով՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը), բացառությամբ Օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված արտոնագրային հարկի, որի վճարումը կատարվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանը սկսելը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), փույթի և (կամ) փուլանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Տվյալ դեպքում գույքի օտարման գործարքից առաջացած ԱԱՀ-ի գծով պարտավորությունը Հարություն Թադևոսյանի կողմից կատարվել է 18.01.2018թ.: Սակայն սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա վճարված գումարը միասնական գանձապետական հաշվին մուտքագրվել է ավելի ուշ՝ 30.01.2018թ.:

Չնայած այն հանգամանքին, որ Հարություն Թադևոսյանի կողմից ԱԱՀ-ի հաշվարկով առաջացած հարկի գումարը վճարվել է օրենքով սահմանված ժամկետում, սակայն Օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հարկի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը, ինչը տվյալ դեպքում տեղի է ունեցել 30.01.2018թ.:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ԱԱՀ-ի գծով տույժերը հաշվարկվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### **4. Եզրափակիչ մաս**

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

## **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 19.04.2018թ. N683/04-Ա որոշման դեմ Հարություն Թադևոսյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

